տիրեալ է 'ի միջի նոցա · լուեալ զայսոսիկ Պողոսի՝ բարիս մաղթէր այնպիսեաց զի ոչ գիտէին զոր խօսէին, և քաջալերական բանիւք յորդորէր զՋաքարիա վարդապետ լինիլ անյողդողդ եւ չվշտանալ 'ի բանից և 'ի գործոց ոմանց, այլ ստանալ զսիրտ արիութեան, եւ մի լքանիլ՝ զի գիտեմք ասէ՝ թէ ո՞ւմ ծառայեմք և վասն ո՞յր ճգնիմք · զի եթէ յուսարեկ լինել հարկ էր, կարգն իմ է ասէ · այսպէս երբեմն նա քաջալերէր զսա տոկալ ամենայն վշտաց, եւ երբեմն սա զնա, զի տանջանք և նեղութիւնք որ վասն Ս. Տեղեաց և Ս. Աթոռոյն էր՝ փառս համարէին ինքեանց։ Ապա բազմիցս յորդորէր զնա զսահմանեալ տուրս մարդաթուի վասն հատուցման երկրորդ բաժնի պարտուց, զոր կիսով չափ վճարեալ էր · զի մի 'ի ժամանակին պաշարեսցի 'ի նեղութեանց և 'ի զզուանաց պարտատերաց · զի չունէր ակնկալութիւն յուստեքէ՝ եւ գոյք եկեղեցւոյ և վանաց սպառեալ էին, ուստի հարկ էր ծանուցանել զվսաւորաց աղգին։

Ի դիմել ուխտաւորաց յերուսաղէմ 'ի ճանապարհի տեղիս տեղիս բռնաւորք ոմանք պահանջէին և գրեթէ բռնի կորզէին 'ի նոցանէ զՀաֆար անուանեալ տուրս, յորոց հասանէր ուխտաւորաց բազմադիմի վիշտ և զրկանք · թէպէտ բազում անգամ հանեալ էին հրովարտակ 'ի բառնալ զայսպիսի բռնապահանջ հարկս, այլ նոքա 'ի բազում տեղիս ոչ անսային հրամանին, որոյ վասն Պողոս և Զաքարիա բազում աշխատութեամբ հանին հրովարտակ արքունուստ և առաքեալ յամենայն քաղաքս և 'ի պատշաճաւոր տեղիս՝ ետուն զայն արձանագրել առեալ Իլամ 'ի Դատաւորաց, որով խսպառ բարձաւ Ղաֆար կոչեցեալ տուրքն 'ի դիւրութիւն ուխտաւորաց։ Բարձին նաեւ զ5000 դահեկան տուրքն զոր պահանջէին Դատաւորք Երուսաղէմի՝ 'ի լրման ժամանակի իւրեանց՝ իբր ծախս ճանապարհի իջանել 'ի Յոպպէ։ Սովորութիւն էր Կուսակալին Դամասկոսի 'ի գալստեան նորին յերուսաղէմ, և զվսաւոր այլազգեաց Երուսաղէմի առնուլ իւրաքանչիւր ամի 'ի վանօրէից ընծանրագին ծրարս ազանելեաց, որպիսիք էին՝ մուշտակ, հանդերձեղէն, կոշիկ, մինչեւ աւել եւ դրգալ եւ զայլ կարասիս · և զայսոսիկ վանականք տային բերել ամ յամէ